



«ԱԶԳԱՊԱՏՈՒՄ»-Ի ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅԱՆ ԵՒ ՕՐՄԱՆԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆ ԴԻՍՈՒԹՅԱՆ

### ՕՐՄԱՆԵԱՆԻ «ԱԶԳԱՊԱՏՈՒՄ»-Ը ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ ՄԱՏՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ

Երեկ երեկոյան Անթիլիասի Մայրավանքին մէջ իւրաքանչիւր բարձրորակ յուշանշաններով մը բարձրագոյն աստիճանի յարգանք մատուցուեցաւ մեր եկեղեցւոյ նոր ժամանակներու բազմատաղանդ հոգեւորականներէն՝ Մարգարէի արք. Օրմանեանի յիշատակին, անոր հեղինակած «Ազգապատում»-ի հսկայածաւալ հատորներուն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ վերահրատարակուելուն առիթով: Մեծաշուք հանդիսութիւնը կը հովանաւորէր Արամ Ա. կաթողիկոսը: Ներկայ էին միաբան հայրեր, Լիբանանի քահանայիցի դարձ, Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, հայր Սահակ Քէչիչեան, վեր. Աւետիս Պոյնջեան, եւ մեծ թիւով լիբանանահայ մտաւորականներ, ազգայիններ ու զբոսայր հայրեր:

Բացման խօսքով Գրիգոր վրդ. Չիֆթեան քանի մը յատկանշիչներով ներկայացուց այն մտքի հսկան, որուն դիմաց պէտք է խոնարհի իր եկեղեցւոյ ու ազգային պատմութեան արժէքին ծանօթ եկեղեցական թէ աշխարհական հայր:

Բանաստեղծ Գրիգոր Ծահինեան ամբողջատեսական լայն շրջագիծով ներկայացուց Օրմանեան մարդը՝ իր բոլոր երեսներով, հոգեւորականը՝ իր գաւազան հանգամանքներուն ու պատասխանատուութիւններուն մէջ, պատմագէտ - բանասէր՝ իր հմուտ գիտութեամբ ու անդուլ աշխատանքով, մանկավարժ՝ իր դաստիարակութեան գործին արդիւնքով ի վերջոյ մեծ կարողութեան տէր անձը՝ երախտագիտութեան արժանի մեր պատմութեան բոլոր ժամանակներուն:

Հանդիսութեան ընթացքին Նորայր Մ. վրդ. Ալեքեան ընթերցեց Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական բաժնի տնօրէն ղոկտ. Զաւէն Եկաւեանի ողբոյն ու շնորհակարարական խօսքը, ուր Եկաւեան իր ուրախութիւնը կը յայտնէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հետ համախորհուրդ նման աշխատանքի մը իրականացման համար:

Օրհնութեան իր խօսքով Արամ Ա. կաթողիկոս անդրադարձաւ հմուտ աստուածաբան Օրմանեանի բազմազան շնորհներուն ըսելով. «Օրմանեանը ինծի համար սոսկ ղէմք մը չէ, այլ երեւոյթ մը մեր եկեղեցւոյ ու ընդհանրապէս մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Իր խոր հաւատքին ու իմացական կարողութեան արդիւնք են իր բոլոր գործերը, որոնց զուէր կը կանգնէ «Ազգապատումը»: Ապա խօսելով Ազգապատումին նիւթի մատչելիութեան ու համապարփակ մատուցման կերպին մասին ըսաւ. «Օրմանեան մեր եկեղեցին դիտած է մեր ազգի կեանքին շրջագիծէն ներս եւ մեր ազգը՝ եկեղեցւոյ շրջագիծէն ներս: Ահա Ազգապատումը կարեւոր յատկանշիչներէն մէկը», շեշտեց վեհափառը:

Գեղարուեստական յայտագիրով հանդիսութեան մասնակցեցան դպրեկանքի սարկաւազներ ու սաներ, շարականով, երգով ու ամուսնեով:

### ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՎԵՐՋԻՆ ԱՌԻԹԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

Հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ նկատելի տուեալ, որ Պէյրութի արաբական վեհաժողովը հաւանաբար պիտի ըլլայ Միջին Արեւելքի խաղաղութեան համար վերջին առիթը, բայց ամէն պարագայի անիկա պիտի նուիրագործէ արաբական իրաւունքները որպէս նախապայման որեւէ խաղաղ լուծումի, որովհետեւ որոշ կողմեր կը փորձեն պարտադրել այլ տարազներ:

Օմանի լրատու գործակալութեան տրուած հարցազրոյցի մը մէջ նախագահ Լահուտ յայտնեց, թէ այդ ժողովը պիտի վերահաստատէ, որ արաբներու ռազմավարական ընտրանքն է խաղաղութիւնը, մինչ իսրայէլ որդեգրած է ուժի ընտրանքը, սակայն որքան ալ սաստկացնէ ջարդերն ու կործանումը, ի վերջոյ ինքզինք պիտի տանի ինքնակործանումի:

Այս նոր դարուն արաբական աշխարհին համար լաւագոյն տարազը միասնականութիւնն է, որուն շնորհիւ կարելի է ղէմ դնել արաբներուն ուղղուող բոլոր զրպարտութիւններուն եւ Սեպտեմբեր 11ի ղէպքերուն

արաբական աշխարհին վրայ անդրադարձնելուն, ըսաւ ան: Նախագահ Լահուտ ցաւ յայտնեց, որ արաբներ, տաղանայներ եւ խոչընդոտներ արգելք կը հանդիսանան միջարաբական յարաբերութիւնները ամրապնդելու, սերտացնելու եւ զիրար ամբողջացնելու ուղղութեամբ տանելու ճիգերուն:

Ատենը եկած է, որ բոլոր անցեալի փորձառութեան մեկնած՝ համոզուելու էր աշխարհը մեր միութիւնն է, ըսաւ ան:

Նախագահ Լահուտ ըսաւ, որ ինք ուրախ է, որովհետեւ արաբ ղեկավարները ընդհանրապէս որոշած են ընդառաջել վեհաժողովին ներկայ գտնուելու հրաւերին. ան ղիտել տուաւ, որ արաբ ղեկավարները պարտաւոր են պատմական տարողութիւն տալու այս ժողովին, որովհետեւ արաբ ժողովուրդները շատ բան կը սպասեն անոնցմէ. «Այս հանգրձանին վտանգներ կը սպառնան մեր գոյութեան, մեր իրաւունքներուն, եւ մեր հողերուն վրայ ապահով ու խաղաղապայման կերտելու մեր

յոյսերուն, ուստի անհրաժեշտ է, որ բոլոր մէկ-դի ձգենք մեր բոլոր զգայնութիւններն ու դժուարութիւնները», ըսաւ ան, հաւաստելով, որ Լիբանան կ'ողջունէ պաղեստինցի նախագահ Եասէր Արաֆատի ներկայութիւնը ժողովին:

«Արաբներուն համար անկարելի է հրաժարիլ լիբանանեան դիմադրութեան եւ պաղեստինեան ինքիֆատայի իրագործումներէն», ըսաւ ան, կոչ ուղղելով, որ բոլոր արաբական երկիրներուն միջեւ յարաբերութիւնները մասնաշատուկ ըլլան Լիբանանի եւ Սուրիոյ պէս. ան բացատրեց, որ այս սկզբունքին գործադրութիւնը դժուարութիւններու հանդիպած է, բայց անոնք յաղթանակներու հանդիպած են, անոնք պիտի շարունակուին, ինչպէս որ ինք համաձայնած է Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի հետ:

Լիբանան առաջինն էր, որ կոչ ուղղեց ստեղծելու արաբական հասարակաց շուկայ մը եւ այսօր աւելի հրամայական է նման ծրագրի իրականացումը, ըսաւ նախագահ Լահուտ:

### ԱՍԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՆԱԽԱԳԱՀՐ ԱՅՅԵԼԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ



Նախարար Յովհաննէս Կ'ընդունի Ասիոյ ֆութպոլի ֆետերասիոնի նախագահը

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէս երէկ ընդունեց Ասիոյ ֆութպոլի ֆետերասիոնի նախագահ Մոհամէտ Պըն Համմար, որուն կ'ընկերակցէին Լիբանանի ֆետերասիոնի նախագահ Հիշամ Հայտար, ընդհանուր քարտուղար Պահիթ Համզէ եւ մարզական խմբագիրներու միութեան նախագահ ինչպէս Նահաս:

Հանդիպումին ընթացքին նախարար Յովհաննէս ողջունեց Պըն Համմար մայրիներու սպայից կարգի շքանշանով պարգեւատրելու նախագահ զօր. Էմիլ Լահուտի քայլը, զորուանցով անոր կողմէ լիբանանեան ֆութպոլին մատուցուած ծառայութիւնները: Ան նաեւ շնորհակարար արաբական մարզական շրջանակները, որովհետեւ Պըն Համմար առանց մրցակիցի ընտրուած է Ասիոյ ֆետերասիոնի նախագահ:

### ՓՈԼ ԱՅԱՆԵԱՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՎԱՏԹԱՐԱՅՈՒՄԷՆ

Պուրճ Համուտի առեւտրականներու միութեան նախագահ Փոլ Այանեան գողւշացուց տնտեսական եւ ընկերային պայմաններու վատթարացումէն եւ կոչ ուղղեց սահպողական վիճակի համապատասխանող արտակարգ ծրագրով զարմանելու այդ հարցերը, «կանխարգիլելու համար ժողովրդային յեղափոխութիւն մը»:

Ան նկատել տուաւ, որ տնտեսական յեղափոխութիւնները, սուրբերու վրայ յաւելումներուն պատճառով զրամագրութիւններու եւ ընկերութիւններու երկրէն փախուստը, բազմազար աշխատաւորներու գործէ արձակումը կը ճնշեն երկրին ու ժողովուրդին վրայ:

### Գ. Կ. ԸՆՍԱՐԳ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկի հայկական բաժանմունքը կը հարողդէ, թէ կրթական 2002-2003 տարեշրջանին համար կը շարունակէ համալսարանական երկրորդ տարուան հայ ուսանողներու դիմումները ընդունելու: Ներկայացման վերջին պայմանաժաման է 31 Մարտ 2002:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ ԳՐԱՄԵՆԵԿ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը կը յայտնէ, թէ Ընդհանուր Ապահովութեան Ուժեղացումը ընդհանուր տնօրէնութիւնը յայտարարեց, որ կարիք ունի պիտուրագրելու իրաւաբանութեան վկայական (լիսանս) ունեցող այրերու, որոնք քննութիւն-մրցանքով յաջողելու պարագային՝ պիտի ընդունուին սպայի աստիճանով:

Թեկնածուն պիտի լիբանանցի ըլլայ աւելի քան տար տարիէ ի վեր, պիտի է ըլլայ անորի, այրի, կամ անուսնաւորուած, եւ պատկառելի չէ ունենայ: Ան պիտի է ունենայ լիբանանեան Բ. պաշարօրէա կամ անոր համար իրաւաբանութեան լիբանանեան վկայական (լիսանս), իսկ համալսարանական ուսման տարիներու միջինը պիտի է ունենայ 12/20 եւ վեր:

Թեկնածուն պիտի է կատարած ըլլայ պիտուրական ծառայութիւնը, կամ կատարելու ընթացքի մէջ ըլլայ, եւ կամ մէկ հատիկ ըլլայ ունենալ անկէ վեր լիցուցում ըլլայ: Առաւելագոյն տարիքը քաղաքայիններուն համար 24ն է, իսկ պիտուրականներուն՝ 26:

Թեկնածուն պիտի է վայելէ քաղաքացի բոլոր իրաւունքները եւ մէկ ամիսէն աւելի քննարկութեան վճիռ ստացած պիտի չէ ըլլայ:

Գիմումները կ'ընդունուին 11/3/2002էն մինչեւ 4/4/2002, Ընդհանուր Ապահովութեան Ուժեղացումը ընդհանուր տնօրէնութեան կեդրոնատեղիին մէջ, Արդարութեան պալատին դիմաց: Մինչ այդ, յաւելալ մանրամասնութիւններ կարելի է ստանալ այդ ուժեղացումը շրջանային կեդրոնատեղիներէն, ինչպէս նաեւ Հայկական Երեսփոխանական Գրասենեակէն, «Շաղպոյեան» կեդրոն, Բ. յարկ:

### ԸՍՏ ՆԱԽԱՐԱՐ ՍԱԼԱՄԻ

### ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿՍԱԾ ԵՆ

Մշակույթի նախարար Հասան Սալամի Պէյրութի արաբական վեհաժողովի կազմակերպիչ յանձնախումբի որպէս նախագահ երէկ հաւաստեց, որ ոչ մէկ արաբական երկիր «նշաններ տուած է», թէ ներկայ պիտի չգտնուի ժողովին:

Վեհաժողովը հիւրընկալելով, Լիբանան կ'ուղղէ սրբագրել աշխարհի առջին իր պատկերը, հաւաստել, որ ինք ապահով հիւրասէր եւ ներդրումներու յարմար երկիր մըն է, ըսաւ Սալամի:

Ան յայտնեց, որ վեհաժողովի օրակարգը պիտի ճշդուի Մարտ 23ին գուշակութեամբ ժողովին:

Սալամի յոյս յայտնեց, որ վեհաժողովը նկատի կ'ունենայ Լիբանանի կեցւածքին սկզբունքային կէտերը, որոնք կը մերժեն միակողմանի բանակցութիւնները եւ կը պահանջեն արդար եւ ամբողջական խաղաղութիւն, ապահովելու համար պաղեստինցի գաղթականներու տունդար:

### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅՈՅԻՈՅ ՄԵՋ

Ուրախութեամբ կը յայտնենք մեր սիրելի բարեպաշտ ժողովուրդին, որ յառաջիկայ Գործըջաբքի, 20 Մարտ 2002 թուին, Արեւագալի արարողութիւն պիտի կատարուի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ թեմիս առաջնորդ՝

**ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ**

Պիտի քարոզ Սրբազան Հայրը: Արեւագալի արարողութեան իր մասնակցութիւնը պիտի բերէ Ազգ. Ազգաբան վարժարանի աշակերտութիւնը, ղեկավարութեամբ Տ. Կոմիտաս քեմ. Փանոսեանին:

ԾԱՆՕԹ. Արեւագալի ժամերգութիւնը կը սկսի ժամը 7:30ին: Սիրով կը հրակիրուի հաւատացեալ ժողովուրդը, ներկայ գտնուելու այս արարողութեան եւ լսելու Սրբազան Եօր պատգամը:

Ի ԴԻՍԱՅ ՆՈՐ ԱՍԱՆԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅՈՅԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՈՒՐԴ

### ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ՆՈՒՐՈՒԱԾ՝

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԱՆԴԱՄ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԻՉ, ՀԱՍԱԶԳԱՅԻՆ ԺԵՄԱՐԱՆԻ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՏՆՕՐԷՆ՝

**ՀՐԱՉ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆԻ**  
(ՍԱՀՈՒՄԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՅԻՆ ԱՌԻԹՈՎ)

Խօսք կ'առնեն՝

**ՅԱԿՈՒ ՀԱՒԱԹԵԱՆ - ԱՌԻՔԷՆ ՅՈՎՍԵՓԵԱՆ**  
**ԴՈՎՏ. ՀՐԱՉ ՀԱՃԵԹԵԱՆ - ԵՐՈՒՄԵՆԻ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ**

ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ԶՈՐԵԶԱՐԹԻ, 20 ՄԱՐՏ 2002, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 8:30ԻՆ, «ՅԱԿՈՒ ՏԵՐ ՄԵԼԵՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱՇԻՆ ՄԵՋ:

Մարտի 22 Մարտին: Գ. Կ. ընդունի փոխան ծաղկեպսակի Գուրգուսի Գուրգուսի Գուրգուսի կատարել քարեխրական հաստատութիւններու:

# ՊԱՂՏԱՏ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱԻ ՄԸ ՁԵՌՆԱՐԿԱԾ Է՝ ԱՐԱԲԱԿԱՆ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պաղտատ ձեռնարկած է դիւանագիտական արշաւի մը՝ արաբական գորակցութիւնն ապահովելու համար Միացեալ Նահանգներուն կողմէ ծրագրուած գործողութեան մը դէմ՝ արաբական վեհաժողովին նախորեակին:

Նախագահ Սատտամ Հիւսէյն պատուիրակներ ուղարկած է արաբական բոլոր մայրաքաղաքները, բացի՝ Ռիատէն եւ Քուէյթէն: Սատտամ կ'ուզէ պատճառահարմարութեամբ միջոցով բացատրել Իրաքի կեցուածքը եւ ապահովութիւնն ստանալ, որ բոլոր արաբները պիտի մերժեն ու դէմ կենան Պաղտատի դէմ ամերիկեան հաւանական յարձակումի մը:

Ինչ լրատու գործակալութիւնը երէկ հաղորդեց, որ Իրաքի պատուիրակները արաբական մայրաքաղաքներուն մէջ պիտի արժարձեն նաեւ պաղտատինեան 18ամեայ ինքնիշխանի հարցը եւ արաբական երկիրներուն որդեգրելիք կեցուածքը Պէյրութի վեհաժողովին:

Փոխ վարչապետ Թարէք Ազիզ հիւսիսային ափրիկեան երկիրներու շրջապատյոյ մը ձեռնարկեց Շարժի օր: Ան Կիրակի օր Լիպիա այցելեց, ուր տեսակցութիւն ունեցաւ նախագահ Մուամմար Քադաֆիի եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներու հետ: Ապա, ան ուղղուեցաւ Թունիզ, ուր հանդիպում պիտի ունենայ նախագահ Չէյնէլապիտին պըն Ալիի հետ: Ազիզ պիտի այցելէ նաեւ Ալճերիա եւ Մարոք: Իսկ Յեղափոխական Հրամանատարութեան խորհուրդի փոխ նախագահ Իզզուէլ Իպրահիմ ցարդ այցելած է Յորդանան, Սուրիա, Լիբանան եւ Եգիպտոս: Իպրահիմ շրջապատյոյ կը շարունակէ այցելելու համար նաեւ Մոցի երկիրները:

Իրաքեան դիւանագիտական արշաւը տեղի կ'ունենայ այն պահուն, երբ Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիք Չէյնի եւ միջինարեւելեան երկիրներու շրջապատյոյ մը ձեռնարկած է: Ուաշինկթըն կ'ուզէ ապահովել արաբական երկիրներու գորակցութիւնը Իրաքի դէմ գործողութեան մը, եթէ Պաղտատ չարտօնէ ՄԱԿի գէնքի քննիչներուն վերադարձը:

Միւս կողմէ փոխ նախագահ Թահա Եասին Ռամատան երէկ ըսաւ, որ Պաղտատ կրնայ հաւանութիւն տալ ՄԱԿի գէնքի քննիչներուն՝ որոշ պայմաններու հաստատումով: Ռամատան շեշտեց, որ Իրաք առանց նախապայմաններու արտօնութիւն չի կրնար տալ քննիչներու վերադարձին: Ան աւելցուց, որ քննիչներուն ժամանումէն առաջ քննութեան ենթարկուելիք վարչերը պէտք է ճշդուին, ինչպէս նաեւ՝ ժամանակացոյց մը պէտք է հաստատուի: Ռամատան դիտել տուաւ, որ քննիչները պիտի վերադառնան, որպէսզի ճշգրիտ տեղեկութիւններ փոխանցեն Ուաշինկթընի, որպէսզի այս վերջինս կարենայ հարածով Իրաքեան թիրախները:

● ԲՐԻՏԱՆԱՅԻ նախարար մը ըսաւ, որ Ուաշինկթըն «ապուշ» արարք մը պիտի գործէ Իրաքի դէմ յարձակում մը գործելով: Նախարար աւելցուց, որ պիտի հրաժարի կառավարութենէն, եթէ վարչապետ Թոնի Պլէր գորավիզ կանգնի այդ գործողութեան:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ԵՐԵՍՓՈՒՅԱՆ ՄՈՒՍԹԱՅԱ ՍԱՍԻ ԿՈՉԸ. ԳՈՒՄԱՐԵԼ ՆՈՐ, ՏԵՂԱԿԱՆ «ԹԱԷՖ» ՄԸ

Նասըրական շարժումի ղեկավար երեսփոխան Մուսթաֆա Սատ կոչ ուղղեց գումարելու տեղական «Թաէֆի ժողով մը», որուն կը մասնակցին բոլոր ուժերը, կազմակերպութիւնները, համայնքները եւ հասունածները, առանց նախօրօք արգիլելու ունէ մէկուն մասնակցութիւնը, այլ նոյնիսկ ապահովելով քրիստոնեայ բեւեռներուն մասնակցութիւնը, նաեւ անոնց որոնք քաղաքի կամ բանտի մէջ են:

«Բոլորս հայրենիքին փրկութեան համար սեղանի շուրջ պէտք է նստինք, դարձնենք անցեալի էջը եւ որդեգրենք ազգային նոր ուխտ՝ յանուն գոյակցութեան, մասնակցութեան, հաւասարութեան եւ ազատութեան», ըսաւ ան:

Սատ բացատրեց, որ Թաէֆը վերը դրաւ պատերազմին, բայց նուիրագործեց կաղ եւ տփոյն քաղաքական տարագ մը, որ պատճառ դարձաւ քաղաքական կեանքի այս աղաւաղումին:

Ան ըսաւ, որ կառավարութիւնը կը խորէ հանրային կարծիքը. ան անցեալին կ'ըսէր, որ տնտեսական դժուարութիւններու պատճառը դիմադրութիւնն է, իսկ այսօր այդ դժուարութիւնները կը վերագրէ համայնքի մը կեցուածքին, բայց ամէն անգամ կը հաւատայ, որ ինք պատասխանատու չէ տագնապին եւ կը մերժէ ինքնաքննադատութիւն կատարել:

### ԻՐԱՆ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆԻ ՄԸ ԱՌԱՋԱՐԿԻՆ ԳԾՈՎ ԹԵՐ ՈՒ ԴԵՍ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐ

Թե ՀՐԱՆ, 18 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի մէջ րաբեկարգչականները Երկուշաբթի օր գրուշաւոր կերպով ողջունած են ամերիկացի ծերակուտականի մը բանակցութեանց զիմելու անսպասելի առաջարկը, մինչ պահպանողականներ այդ քայլը դատապարտած են: Կառավարութեան բանբերը՝ Ապտալլա Ռամզանզադէն յայտնած է, որ կառավարութեան տեսակէտը այն է, թէ իրանցի եւ ամերիկացի մտաւորականներու եւ ներկայացուցիչներու միջեւ տրամադրութիւն չկայ: «Ատրիակ երեսփոխաններէն կախեալ է», ըսած է ան, ըստ Երկուշաբթի օրուան թերթերուն:

Մ. Նահանգներու Ծերակուտին արտաքին յարաբերութեանց նախագահ՝ Ճորջ Պիտրն, անցեալ շաբաթ առաջարկած է Ուաշինկթընի կամ այլ վայրի մը մէջ տեսակցութիւն ունենալ իրանցի երեսփոխաններու հետ եւ աւանդական թշնամիներուն միջեւ հաշտութեան կոչ ուղղած է:

«Իրանի մէջ փոփոխութիւն հետապնդողներուն» օժանդակելու նպատակադրութեամբ, ղեմակարգ ծերակուտականը յայտնած է, թէ պատրաստ է իրանեան խորհրդարանի անդամներ ընդունելու, երբ որ անոնք ուզեն այցելել եւ «եթէ ատրիակ շատ նուրբ հարց է, պատրաստ եմ անոնց հետ այլ տեղ տեսակցելու»:

## ՊԵՏՔ Է ԱՄԷՆ ԳՆՈՎ ՍԿՍԻԼ ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼՔԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Կ'ԸՍԷ ՅՈՐԴԱՆԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ

ԳԱՀԻՐԷ, 18 (ՌՈՅԹԸՐԸ).- Յորդանանի արտաքին գործոց նախարար Մարուան Մուաշէր ըսաւ, որ որեւէ ճիգ պէտք է ինչպէս վերսկսելու համար Միջին Արեւելքի խաղաղութեան բանակցութիւններուն: Մուաշէր աւելցուց, որ այս հարցը պէտք է առնչուի Իրաքի դէմ գործողութեան մը գորակցութիւնն ապահովելու համար ի գործ դրուած ամերիկեան ճիգերուն: Մուաշէր, որ կը խօսէր Եգիպտոսի մէջ, շեշտեց, որ պաղտատինեան հարցը լուծելու եւ անոր քաղաքական մեայուն լուծում մը գտնելու համար ճիգերը պէտք է թափ ստանան: Ան ըսաւ նաեւ, որ Յորդանան կ'ողջունէ որեւէ նախաձեռնութիւն, որ յիշեալ ուղղութեամբ կ'ընթանայ:

Խօսելով ամերիկացի երկու պաշտօնատարներու Միջին Արեւելք այցելութեան մասին, Մուաշէր ըսաւ, որ Տիք Չէյնի եւ Անթոնի Չիլիի այցելութիւնները իրարու հետ կապ չունին, որովհետեւ իւրաքանչիւրը տարբեր նպատակ կը հետապնդէ:

Պիտրնի այդ քայլը կը հակասէր նախագահ Ճորջ Պիտրնի յայտարարութեան, թէ իրանը, Իրաքի եւ Հիւսիսային Գորէյի հետ «չարու-թեան առնցք»ի մը մաս կը կազմէ՝ հաւաքական քանդուածի գէնքեր ձեռք ձգել փորձելով, հետեւաբար անոնք ահաբեկութեան դէմ պատերազմին Մ. Նահանգներու հաւանական թիրախներէն կրնան դառնալ:

Խօսելով ամերիկացի երկու պաշտօնատարներու Միջին Արեւելք այցելութեան մասին, Մուաշէր ըսաւ, որ Տիք Չէյնի եւ Անթոնի Չիլիի այցելութիւնները իրարու հետ կապ չունին, որովհետեւ իւրաքանչիւրը տարբեր նպատակ կը հետապնդէ:

Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահմէտ Մահմուտ, որ ներկայ էր Յորդանանի վարչապետ Ալի Ապու Ռադէպի եւ նախագահ Հիւսէյն Մուպարաբի միջեւ տեղի ունեցած տեսակցութեան, ըսաւ, որ երկու ղեկավարները խորհրդակցեցան պաղտատինեարայէեան տագնապին ու Իրաքի մասին:

Իրանի արեւտուրի նախարար Մոհամէտ Շարիֆմատարի դիտել տուած է, որ ամերիկացիք կարելի որեւէ միջոց կ'օգտագործեն իրենց նպատակին հասնելու համար, այսինքն՝ «ներքին խմբակներու միջեւ բանավէճեր ստեղծել»:

### ՓՈՐԹՈՒԳԱԼ

## ՊԱՐՐՈՍՕ ՎԱՐՉԱՊԵՏ ՊԻՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԻ

ԼԻՋՊՈՆ, 18 (ՌՈՅԹԸՐԸ).- Փորթուգալի նախագահ Հորդէ Սամիայօ այս շաբաթ ընկերվար ժողովրդավար ղեկավար խոսէ Մանուէլ Տուրաօ Պարրոսոն անպաշտօն կերպով վարչապետ պիտի նշանակէ, Կիրակի օրուան ընտրութիւններուն անոր ապահոված յաղթանակէն ետք, ըսած է նախագահին մէկ բանբերը Երկուշաբթի օր:

Մակայն կեդրոնի աջ ընկերվար ժողովրդավարները 230 աթոս հաշուով խորհրդարանին մէջ չեն կրցած մեծամասնութիւն ապահովել: Մեկնաբաններու համաձայն՝ պահպանողական փոքր ժողովրդային կուսակցութիւնը կրնայ կառավարական ընկերակցութեան մէջ անոր գործակիցը ըլլալ:

Պաշտպանութեան նախարար Ժոզակալ Ալի Շարիֆն յայտնած է, թէ Մ. Նահանգներ «կր փորձեն մեր ազգային միասնակամութեան վրայ յարձակիլ» եւ թէ ամերիկեան ռազմավարութեան դիտարկել կը նշանակէ գայն յուսաբեր ընել՝ «ազգային միասնականութեան ճամբով», շեշտած է ան:

Փորթուգալի մէջ կանխահաս ընտրութիւններ տեղի ունեցած են, որովհետեւ ընկերվարական վարչապետ Անթոնիո Կուլթերէշ Դեկտեմբերին հրաժարած էր՝ տեղական ընտրութեանց ընկերվար ժողովրդավարներու ջանքերի յաղթանակէն ետք:

Փորթուգալը Ե. Միութեան անդամ 6 երկիրներու առաջինն էր, որ այս տարի ընտրութիւններ կը կայացնէր: Յրամասյի, Գերմանիոյ, Իրլանտայի, Հոլանտայի եւ Շուէտի մէջ եւս ընտրութիւններ տեղի պիտի ունենան:

Իրանի գերագոյն հոգեւոր պետ Ալաթոլլա Ալի խամենէյի հետեւողականներն մերժած է Ուաշինկթընի հետ յարաբերութեանց վերահաստատման որեւէ քայլ:

### Կ'ՈՒՉՈՒԻ

●Տան մը համար զանազան աշխատանքներ կատարող տիկին մը, շաբաթական երկու օրուան համար: Դիմել՝ հեռ. 03-585214:

### ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Բ.ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈՒԷՃ

### ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Բ.ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈՒԷՃ

ՀԱՅՏԱՐ - Ի ԲԵՐԼԻՆԻ ՀԱՅ ԱՐՇԱՅՍԱԿԱՐԺՆԵՐՈՒ ԽՈՒԹԻՒՆ (ԸՄԱՐՏԱՐԱԳԵՆՆԵՐ ԵՒ ԸՄԱՐԱՐԱՊԵՆՆԵՐ)

### ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նիւրք՝  
**ՓԱՍՔԱՆ ՓԱՊՈՒՃԵԱՆ**  
 Մարդը եւ Գործը

●Գեղարուեստական բաժին

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 22 Մարտ 2002ին Երեկոյեան ժամը 8:00ին, Ս. Խաչ Եկեղեցւոյ սրահին մէջ, Չալքա:

## ՇԵՒԱՐՏՆԱԾԷ՝ ՊՐԻԻՔՍԵԼԻ ՄԵՋ



Էտուարտ Շեւարտնաձէ

Վրաստանի նախագահ էտուարտ Շեւարտնաձէ երէկ Պրիւքսելի մէջ տեսակցութիւն ունեցած է Եւրոպական Միութեան դիւանագէտներու հետ՝ քննարկելու համար «հակահարեկական» քայլերը, գորսիր հանրապետութիւնը կ'առաջարկէ առնել՝ ամերիկացի մարզիչներու օժանդակութեամբ:

Ե. Միութիւնը սերտօրէն կը հետեւի Կովկասեան շրջանին մէջ տեղի ունեցող ղէպերուն, յատկապէս Վրաստանի Փանքիսի կիրճին մէջ:

Թէեւ Ե. Միութիւնը ցարդ որեւէ հակում ցոյց չէ տուած որեւէ գործողութեան ուղղակի միջամուխ ըլլալու, Շեւարտնաձէ իր հանդիպումը առիթ մը նկատած է գորակցութեան առնուազն բանաւոր արտայայտութեանց:

Ան տեսակցութիւն մը ունեցած է Ե. Միութեան արտաքին քաղաքականութեան հարցերու պատասխանատու խաւիէ Սոլանայի հետ, որ մերժած է պատասխանել հարցումի մը, թէ արդեօք Ե. Միութիւնը կրնայ որեւէ դերակատարութիւն ունենալ շրջանին մէջ համայնքային բնոյթի տագնապներու լուծման մէջ:

Ամերիկացի մասնաշաղկուտ ռազմաւորային Վրաստան պիտի հասնին երկիրն զինեալ ռազմերը մարզելու եւ զինելու համար՝ Փանքիսի մէջ զինեալներու դէմ գործողութիւններու նպատակով: Ուաշինկթընի համոզումով «Քայլաւոր» ցանցի անդամ զինեալներ այդ կիրճին մէջ ապստամբած են:

Ռուսիա այդ ծրագրին դէմ իր առարկութիւններէն հրաժարած է, հակառակ անոր որ ապահովութեան մարզի կարգ մը մեկնաբաններ կ'ըսեն, թէ անիկ կրնայ զարգաւալ ու յանգիլ Աբխազիոյ շրջանին մէջ վրացական միջամտութեան:

Կ'ակնկալուի, որ Շեւարտնաձէ ապահովութեան կապուած հարցեր քննարկէ ՕԹԱՆԻ ընդհանուր քարտուղար Ճորջ Ռոպորթի մը հետ: Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ռոմանօ Փրոտիի հետ: Շեւարտնաձէ յայտնած է, թէ իր երկիրը կ'ուզէ օր մը Ե. Միութեան անդամակցիլ եւ խոստացած է ստեղծական բարեկարգումներու ձեռնարկել՝ այդ նպատակին հասնելու համար:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՅՈՐԴԱՆԱՆ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՄԸ ԽՄԲԱԳԻՐԸ՝ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ

ԱՄՍԱՆ, 18 (ՌՈՅԹԸՐԸ).- Յորդանանի իշխանութիւնները ձեռնարկել են խմբագրապետը «Պիլա» շաբաթաթերթին՝ կառավարութիւնը փտածութեամբ ամբաստանող յօդուած մը հրատարակած ըլլալուն համար:

«Պիլա»ի սեփականատէրը՝ Թաթուտին Հրուպ ըսաւ, որ Հաշմ խալիթի ձեռնարկուած է Կիրակի օր, ապահովութեան տեսանի գատախաղին հրահանգով: Խալիթի ձեռնարկութեան օր մը առաջ ձեռնարկուած էր նախկին երեսփոխան իր կառավարութիւնը՝ գայն փտածութեամբ ամբաստանելով: Յայտալ Կիրակի օր հացադուլի սկսաւ, իրրեւ բողոք ձեռնարկութեան դէմ:

Մարտ 11ին լոյս տեսած յօդուածին մէջ, խալիթի քննադատած էր կառավարութիւնը եւ շարք մը ամբաստանութիւններ ուղղած անոր դէմ: Սեպտեմբերէն ի վեր, ան բերրող լրագրողն է, որ կը ձեռնարկուի Յորդանանի մէջ:

Պաշտօնական աղբիւրներ չհաստատեցին ու մեկնաբանութիւն չկատարեցին Յայտալի եւ խալիթի ձեռնարկութեան լուրերուն մասին:



# ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնէ՝ 01-242556 թիկին:







# ԱՌՈՂՋԱՊԱՐԱԿԱՆ

## ԾԻՆԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ՄԱՆՐԷՄԸ՝ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԿՌԱՅԻ ՓՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Գրեթե ամեն ծնող կը դիմագրանէ իր զավակին՝ ակուաները փտուածնէն զերծ պահելու մղձաւանջը:

Մինչ 2 տարեկան մանուկի մը ակուաները վրձնելը կրնայ կարեւոր չթուիլ, սակայն անիկա կարեւոր է:

Պոսթընի Ֆորսայթ հիմնարկի հետազոտող Տէն Սմիթ կ'ըսէ, որ եթէ որեւէ փտուած երեխայի մը կաթի մայր ակուաներու վրայ կը գտնուի, հետագային ան պիտի փոխանցուի մնայուն ակուաններուն:

Արդարեւ, ներկայիս հետազոտողներ գիտեն, թէ ակուայի փտուածնէն պատճառը Սթրեփթոքըս միւլթան կոչուած մանրէն է, եւ թէ՛ այդ մանրէնները ակուաներուն վրայ կը հաստատուին 1,5էն 36 տարեկանի մինջ:

Հետեւաբար նպատակը մանրէնները կասեցնել է՝ նախքան անոնց զարգացումը:

Կարգ մը գիտնականներ ֆետրուարին յայտարարեցին, թէ ակուայի փտուածնէնը կասեցնելու միջոց մը գտած են՝ ծինալիս փոփոխութեան ենթարկուած հեղուկի մը գործածութեամբ:

Հետազոտողները «սփրէյ» մը մշակած են եւ անոնք կը յուսան, որ մարդոց մօտ փորձարկուածները կարելի պիտի ըլլայ սկսիլ այս տարեվերջին Բրիտանիոյ եւ Մ. Նահանգներու մէջ:

Անոնք կ'ըսեն, թէ յատուկ այդ հեղուկը, որուն ազդեցութիւնը ամբողջ կեանք մը պիտի տեւէ, բերանին մէջ պիտի սրսկուի 5 վայրկեան տեւողութեամբ դարմանումի մը ընթացքին, որ նուազ քան 150 տոլար պիտի արժէ:

Ակուայի փտուածնէն պատճառը շաքարը չէ, այլ մանրէն մը՝ Ս. միլթան, որ բերանին մէջ կ'ապրի եւ շաքարը լաքթիթթու կը վերածէ: Այս թթու է, որ ակուաներուն կ'ազդէ:

Ֆորսայթ հիմնարկի փորձերէն փորձերէն Զեֆրի Հիլմըն ծինալիս փոփոխութեան ենթարկած է այդ մանրէն, ձեւի մը, որ լաքթիթթու չ'արտադրեր եւ հետեւաբար ակուայի փտուածնէն չի պատճառը:

Անասուններու մօտ փորձարկումները ցոյց տուած են, որ ծինալիս փոփոխութեան ենթարկուած մանրէն փոխարինուած է:

տուածնէն շաքար պարունակող սննդականութեան ստացած են: Մասնազէտները նկատած են նոյնիսկ, որ շաքարը մանրէին օգնած է, որ ակուային մակերեսին վրայ հաստատուի:

Փրոֆ. Հիլմըն կ'ընդգծէ, թէ փոփոխութեան ենթարկուած մանրէն ծինալիս իմաստով ապահով եւ կայուն է:

Ան կ'ըսէ, թէ ծրագրերին վրայ աշխատած է 25 տարի եւ «պիտի չմտածէի զայն բաշխել, եթէ ամբողջովին վատահալը լիջնէր, թէ անիկա ապահով է ընդհանուր հանրութեան գործածութեան համար», կը շեշտէ ան:

Հիլմըն կը յայտնէ, որ իր մօտեցումը կարելիութիւնը ունի, «եթէ մեր ենթադրածին նման գործէ», ակուայի փտուածնէնը ջնջելու:

Այլ մասնագէտ մը՝ Տեյն Սմիթըն, դիտել կու տայ, որ Հիլմընի յայտնարեւոյթը «մեզ քայլ մը աւելի կը մօտեցունէ այն օրուան, երբ մանրէն մարդ, կեանքի ամբողջ տեւողութեան գերծ պիտի ըլլայ ակուայի փտուածնէն»:

Սակայն ան կը զգուշացնէ, թէ ակուայի վրձնները տակաւին անգործ չեն: «Ակուաներու առողջապահութիւնը միշտ անհրաժեշտ պիտի ըլլայ «փաթեթ» կուտակուածնէն պատճառով», կը շեշտէ ան:

### ՓՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՏՈՒԱՍՏ

Նորագոյն ուսումնասիրութիւններու համաձայն, հետազոտողները կ'առաջարկեն այսուհետեւ ակուայի փտուածնէն դէմ պայքարիլ պատուաստներու ցամաքով:

Տէն Սմիթ եւ անոր խմբակը կը նպատակադրեն մարմնին սեփական բնական պաշտպանութեան դրոշմները օգտագործել՝ դիմադրելու համար վարակումին:

Ըստ տորթ. Մարքի Թոպմընի, նման մօտեցում մը շատ օգտակար միջոց մը պիտի ըլլայ պայքարելու համար «այս իսկապէս ցաւ պատճառող եւ սուղ արժող վարակիչ հիւանդութեան դէմ՝ աշխարհի տարածքին»:

Նախնական ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ պատուաստը ապահով է եւ ակուաներուն վրայ մարմնէն դիմադրելու համեմատութիւնը կը նուազեցնէ:

Թոպմըն եւ Սմիթ կ'ընդգծեն, որ պատուաստը ակուաները վրձնելը կամ ատամնաբուծի այցելութիւնները պիտի չընջէ, սակայն անիկա օգտակար պիտի ըլլայ ակուայի հոգատարութեան:

Անոնք կը յուսան, որ օր մը պատուաստը պիտի տրուի շուրջ մէկ տարեկան մանուկներու, որոնց մօտ մանրէները տակաւին զարգացած չեն ըլլար, սակայն որոնց մարմնին բնական պաշտպանութեան դրոշմները բաւարար ուժեղ կ'ըլլայ գործելու համար:

## ԿԵՆՍԱՆԻԹԵՐ ԿՐԵԱՆ ՏԵՍՈՂՈՒԹԻՒՆԸ ՊԱՀՊԱՆՆԵԼ

Առողջ ձեւով ուտելը կրնայ օգտակար ըլլալ տեսողութեան պահպանման, կ'ըսէ նորագոյն ուսումնասիրութիւններէն մէկը, որ Սէ. կենսա-նիւթի պակասը քաթարաքթի կը կապէ:

Ամերիկացի հետազոտողներ 1976էն ի վեր 53էն 73 տարեկան շուրջ 500 կիններու պարագաները ուսումնասիրած են:

Քաթարաքթը ընդհանրապէս կը յայտնուի 65 տարեկանէն ետք: Անոր պատճառը աչքի ռսպինակի ըջիջներուն «մշուշոտ» դառնալն է:

Ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, թէ երկար տեւողութեան վրայ Սէ. կենսանիւթ ստանալը կրնայ նուազեցնել քաթարաքթի հաւանականութիւնը, սակայն դիտնականները չեն կրցած

կան կիններու պարագաները, Սէ. կենսանիւթի մեծ համեմատութիւններու (362 միլիկրամ) սպառումը կ'ապրուած է քաթարաքթի որոշ տեսակի մը 57 առ հարիւր նուազ հաւանականութեամբ:

Հետազոտողները գտած են նաեւ, որ առնուազն 10 տարի Սէ. կենսանիւթի գործածութիւնը ընդհանրապէս քաթարաքթի տեսակներէն 60 առ հարիւրով նուազ հաւանականութեան կապուած է, բաղադրուած կիններու, որոնք Սէ. կենսանիւթ չեն ստացած:

Բրիտանացի մասնագէտ Բրիան Պէյց կ'ըսէ, թէ ուսումնասիրութիւնը յաւելեալ փաստ մըն է, որ Սէ. կենսանիւթը կարեւոր է աչքի առողջութեան համար:

Ան կը բացատրէ, որ հետազոտողները կը հետաքրքրուին Սէ. կենսանիւթով, որովհետեւ անոնք գիտեն, թէ այդ կենսանիւթէն մեծ համեմատութիւն մը կը գտնուի աչքին մէջ, եւ թէ մարդիկ, որոնք քաթարաքթի հարց կը դիմադրեն, անիկ փոքր համեմատութիւններ ունին աչքերուն մէջ:

«Այսուհետեւ, տակաւին բաւարար փաստեր չունինք ցոյց տալու, որ արդեօք այս ազդեցութիւնը ամբողջովին կապուած է Սէ. կենսանիւթին, թէ այլ տեսակներ նաեւ կան», ըսած է ան:

յայտնարեւոյթի մը մասին, որ կրնայ փոխել երեխաներու մօտ տեսողութեան ամէնէն հասարակ հարցին դարմանումի ձեւը:

Օրական կանոնաւորութեամբ գործածուելիք հեղուկը, որ կը գտնուի հարց չունեցող աչքին մէջ, կը պարունակէ արքիտիոլ կոչուած դեղը, որ յաճախ կ'արտահանուի թունաւոր «պելլատոն» քայսէն, կ'ընդլայնէ աչքի բերանը:

Հետազոտողները կ'ըսեն, թէ կաթիլները առողջ աչքին մէջ պատկերներ կ'արտադրելով, որ տկար աչքը յարմարի:

Մ. Նահանգներու Աչքի Ազգային Հիմնարկի տնօրէն Փոլ Սիվինի կը յայտնէ, թէ ուսումնասիրութեան արդիւնքները կարեւոր են, որովհետեւ անոնք կը հայտնաբերեն օգտակար փոխընդունեցող դարմանում մը, որ մալիլիոլը երեխաներուն կ'օգնէ, որ տեսողութեան մնայուն դժուարութիւններ չունենան:

Ներկայիս մալիլիոլի (ձեռք աչքի գիտական անունը) կը դարմանուի շաքարներ կամ ամիսներ մէջ աչքը «փէչ»ով մը փակ պահելով: Ըստ Սիվինի, երեխաները ընդհանրապէս այս մօտեցումը չեն սիրեր, որովհետեւ կը ստեղծուին զանազան հարցեր, ինչպէս՝ մորթի բորբոքում կամ այլ երեխաներու կողմէ վերաւորական արտադրութիւններ:

Ըստ Աչքի Ազգային Հիմնարկին, ամերիկացի երեխաներուն 2էն 3 առ հարիւր տեսողութեան հարց կը դիմագրանէ «ծոյլ աչք»ի պատճառով: «Շոյլ աչք»ը կը յայտնուի, երբ այնպէս առողջ ամերիկացի հետազոտողներ անցեալ շաբաթ,

որովհետեւ ուղեղը ստրված կ'ըլլայ միւս աչքին նախապատուութիւն տալ:

**ՋՂՋԻԿՆԵՐ ԿՈՅՐԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ՅՈՒՊԵՐՈՒ «ԳԱՂՓԱՐԸ ԿՈՒ ՏԱՆ»**

Բրիտանացի գիտնականներ ղղիկներէ ներջնուած յատուկ ցուպ մը ստեղծած են կոյրերու եւ մասամբ տեսնող անհետեւ համար, որպէսզի անոնք իրենց ճամբան տեսնեն:

Ղղիկները դիւրին կը շարժին, մօտակալ առարկաներուն ուղղութեամբ արձակելով մեր կողմէ շարժող ձայներ, որոնք անոնց բախելով՝ իրենց ակունջներուն կը վերադառնան:

Ընդհանրապէս կրնան ակունջները արիկա օգտագործած են իբրեւ «մոտել» իրենց ցուպին համար, որ մարդոց կողմէ շարժող «սոնար» ալիքներ կ'արձակէ զայն գործածողին օգնելու, որ առջեւ, շուրջ կամ վրան խոչընդոտ մը կայ:

Մասնաւոր օրէնք առարկայ ցուպին կոթին վրայ թրթռացում կը յառաջանցնէ: Մինչ առարկան աւելի կը մօտենայ, թրթռացումները կ'արգանան:

Մարդիկ պիտի զգուշացուին առարկաներէ, որոնց չի հասնիր աւանդական ցուպը, կ'ըսէ Անտրիա Տիսթըն:

Ան կը բացատրէ, թէ ցուպը, զոր «Պէքթիլ» կոչուած է գիտնականներուն կողմէ, տեսողութեան հարց ունեցող մարդոց պիտի օգնէ, որ «մտքի բարոյս» մը ստեղծեն իրենց շրջապատին մասին, քաջալերելով անկախ շարժումները յատկապէս քաղցրին մէջ:

Անիկա ծախուելու պիտի սկսի 2002ին վերջերուն:

**ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ ԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԱԿՆԱԳՈՒՆԴԵՐ ԿԸ ՍՏԵՂԾԵՆ**

Ճափոնցի գիտնականներ յաջողած են առաջին անգամ՝ ըլլալով արուեստական ակնագուրդեր անցնել:

Անոնք կ'ըսեն, թէ օգտագործուած միջոցառումը կրնայ օժանդակել աչքի հարցեր դիմագրաւող մարդոց դարմանումները կատարելու համար:

Թորոնթի համալսարանին հետազոտողները շերտաբանութեամբ վրայ փորձարկումներ կատարած են՝ կոյրերու համար դարմանումներ պատրաստելու համար:

Անոնք գործի սաղմերէ բջիջներ առած են եւ գտնուցր պատուաստած են շերտաբանութեամբ: Հետազոտողները գլխաւորած կենսաբան Մարքո Ասաշիմա կը յայտնէ, թէ նախ բջիջ մը գտնուցր է յատուկ նիւթի մը մէջ, որ մնացած է որոշ ժամանակ մը, ապա անիկա պատուաստուած է շերտաբանութեամբ մարդոց մարմանումները գտնելու:

Այլ գիտնականներ տակաւին փորձարկումներ կարեւորութեան գնահատումը չեն կատարած:

## ԾԱՄՈՆԸ ՄԱՐԴԻԿ ԱԻԵԼԻ ԽԵԼԱՅԻ՞ ԿԸ ԴԱՐՁՆԵ

Բրիտանական ուսումնասիրութեան մը համաձայն, ծամոն ծամելը մեզ աւելի խելացի կը դարձնէ այն իմաստով, որ անիկա զրական ազդեցութիւն կ'ունենայ մտածումին եւ իշողութեան վրայ:

Նորթամպթրի համալսարանին մասնագէտներէն Անտրիա Շոլի համաձայն, «արդիւնքները չափազանց յստակ էին եւ մասնաւորաբար բացայայտեցին, թէ ծամոն իշողութիւնը թիրախ կ'ընտրէ»:

Ան կ'ըսէ, թէ մարդիկ յաւելեալ բառեր յիշած են եւ աւելի լաւ արդիւնքներ տուած են իշողութեան կապուած փորձարկումներու մէջ:

Շոլի կը յայտնէ, որ նշեալ լաւ արդիւնքները կարելի է վերագրել սրտի յաւելեալ զարկերու եւ դէպի ուղեղ գացող յաւելեալ էնսիւլինի:

Փորձարկումներուն մասնակցած են 75 հոգի՝ բաժնուած չծամոններու, իսկական ծամոններու եւ «կեղծ» ծամոններու խմբակներու:

25 վայրկեան տեսողութեամբ փորձարկումներուն ընթացքին օգտագործուած են հարցումներ, կապուած՝ կարծ տեսողութեան վրայ իշողութեան, ինչպէս՝ անձի մը հետաձայնի թիւը յիշելու կարողութիւնը:

Շոլի համաձայն, փորձարկումներէն ետք իսկական ծամոններու սրտի զարկերը վարկանքները զարկ աւելի արագ եղած է՝ բաղադրուած չծամոններու եւ՝ 1,5 անգամ աւելի արագ քան կեղծ ծամոնները:

«Կը կարծենք, որ սրտի զարկերու թեթեւ բարձրացումը կրնայ բարձրաւել դէպի ուղեղ թթուանիւն եւ «կլիլքոզ»ի (շաքար մը) առաքումը, ինչ որ բաւարար է մտածումի եւ իշողութեան նման աշխատանքներ բարելաւելու համար», կ'ըսէ մասնագէտը:


Շոլի կը բացատրէ, թէ այլ կարելիութիւն մը այն է, թէ ծամոն ծամելը էնսիւլինի քանակը կ'աւելցնէ բերանին շրտուելու պատճառով, առ ի պատրաստութիւն ճաշի մը:

«Ծամոն է, որ ուղեղին կարգ մը մասերուն մէջ կան էնսիւլինի կապուած կէտեր, որոնք կարեւոր են ստրվելու եւ իշողութեան համար», կ'ըսէ ան:

**Պատրաստեց՝ Ս. Ա. ՊՈՅԱՃԵԱՆ**  
(Արեւիկե՝ «ՈՂՅՈՐԶ», «ՊԻ. ՊԻ. ՍԻ.»,  
«ԻՆՏԵՐՆԵՆԵԼ ՇԵՐԸՍ ԹԻՊՈՒՄ»)



# ՄԱՐԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



## ՊԱՏԵԹՊՈԼ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՅՍՕՐ՝ ՍԱԺԷՍ - ԻԹԹԻՀԱՏ

Անցեալ շաբաթավերջին Ղազիրի մէջ տեղի ունեցաւ պատեթպոլի արաբական ակումբներու տղոց 16րդ եւ աղջկանց 12րդ ախոյեանութեան մրցաշարքին վիճակաձգութիւնը: Տղոց մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն ութ խումբեր (բաժնուած երկու խմբակի), իսկ աղջկանց մրցաշարքին՝ ինը խումբեր (բաժնուած երկու խմբակի):

Ստորեւ՝ վիճակաձգութիւնը:

#### ՏՂԱԸ

Ա. ԽՄԱԱԿ.- Սաժէս (Լիբանան), Իթթիհատ Սաբնտարի (Եգիպտոս), Ահլի (Լիպիա) եւ Ուիտատ Պուֆարիթ (Ալճերիա):

Բ. ԽՄԱԱԿ.- Ժագիրա (Եգիպտոս), Շանվիլի (Լիբանան), Օրթոնոսի (Յորդանան) եւ Մոլոտի (Ալճերիա):

#### ԱՂՋԻԿՆԵՐ

Ա. ԽՄԱԱԿ.- Մըտաուարի ոստիկանութիւնը (Թունուզ), Սփորթինկ (Եգիպտոս), Մոլոտի (Ալճերիա), Սաֆաքասի (Թունուզ) եւ Անդրանիկ (Լիբանան):

Բ. ԽՄԱԱԿ.- Սաժէս Մար Տումէթ (Լիբանան), Ահլի (Եգիպտոս), Օլիմպիկ (Ալճերիա) եւ Մալասալ (Թունուզ):

Առաջին օրուան մրցումներուն, Սաժէսի երկու խումբերն ալ արձանագրեցին յաղթանակներ, պարտութեան մատնելով իրենց մրցակիցները:

Տղոց կազմը 19 կէտի տարբերութեամբ պարտութեան մատնեց Ահլին (Լիպիա), իսկ աղջկանց կազմը 16 կէտի տարբերութեամբ՝ Մալասալը (Թունուզ):

Անդրանիկի աղջիկները, սակայն, պարտութեամբ սկսան մրցաշարքը, երբ 71-63 արդիւնքով պարտուեցան Սփորթինկին (Եգիպտոս):

Նշենք, թէ Սաժէսի տղոց կազմը այսօր կը ճակատի իթթիհատի դէմ (Եգիպտոս):

#### ՔԱՆԶԻՕ

### Ա. ԷՍ. ՌՈՍԱ - ԻՆՔԷՐ ՄԻԼԱՆ - ԵՌՈՎԵՆԹՈՒՍ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Իտալիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Քալչիօ) 27րդ ճանգրուանի մրցումներուն, առաջին երեք շրջանները գրաւող խումբերը՝ Ա. Էս. Ռոմա, Ինթէր Միլան եւ Եովեթթուս յաղթանակներ արձանագրելով, շարունակեցին իրենց պայքարը՝ ախոյեանութեան տիրոջին համար:

Պարագլուխի դիրքը գրաւող Ա. Էս. Ռոմա, որ միայն կողմը չէր տարբերութեամբ կը գերազանցէ 2րդ դիրքը գրաւող Ինթէր Միլանը, իր դաշտին վրայ 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Աթալան (11րդ): 55 հազար համակիրներու ներկայութեան, Վինչենցօ Մոնթելա (17րդ եւ 68րդ) եւ Մասիմօ Քարերա (29րդ) սխալմամբ իր բերդին ներս) նշանակեցին Աշալան տէրերուն կողմը, իսկ Քրիսթիանօ Տոնի՝ Աթալանի կողմը (84րդ):

Ինթէր Միլան 2 - 1 արդիւնքով յաղթական վերադարձաւ վտանգաւոր դիրքի վրայ գտնուող (16րդ) Լեչէի դաշտին, շնորհիւ՝ ուրուկուէյցի Երաշակազ Ալվարօ Ռեքոպիլի կողմէ նշանակուած երկու կոլերուն (40րդ եւ 67րդ): Դաշտին տէրերը իրենց կողմը նշանակեցին մրցումին վերջին վայրկեանին:

Առաջին երկու շրջանները գրաւող կազմերէն միայն մէկ կէտով ետ մնացող Եովեթթուս իր դաշտին վրայ 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Վերոնան (9րդ): Փաւէլ Նետվիտ նշանակեց Եովեթի կողմը (38րդ):

Պրեշիա, որ իր դաշտին վրայ կը հիւրընկալէր Լացիօ Ռոման, պարտութեան մը փրկուեցաւ, երբ մրցումին վերջին վայրկեանին, Ռոպերթօ Իլանա փենսիլթիով նշանակեց դաշտին տէրերուն հաւասարութեան կողմը (1 - 1): Լացիօյի կողմը նշանակեց Հեռնան Քրեսպօ (56րդ):

Նախքան այս մրցումը, Շաբաթ օր Լացիօյի երկու մարզիկները՝ Լուքաս Քասթրոնան եւ Տիմօ Պաճիօ, մարզիչ Ռոպերթօ Ռոսսի եւ Տորիանօ Ռուճիերօ (խումբին բոխիչը) յարձակման ենթարկուեցան անձանթ անձերու կողմէ, երբ կը շրջափայտին իրենց իջեանած պանդոկին շուրջը:

Ստորեւ՝ 27րդ ճանգրուանի մրցումներուն արդիւնքները:	
Պրեշիա - Լացիօ Ռոմա	1 - 1
Քրիստօ Վերոնա - Վենեցիա	1 - 1
Ֆիորենտինա - Պոլոնիա	1 - 1
Եովեթթուս - Վերոնա	1 - 0
Լեչէ - Ինթէր Միլան	1 - 2
Փերուճիա - Փարմա	2 - 1
Ուտինեպէ - Փիաչենցա	1 - 1
Ա. Էս. Ռոմա - Աթալան	3 - 1
Ա. Սէ. Միլան - Թորինօ	2 - 1

ԴԱՍԱԻՌՈՒՄ	ԿէՏ
1.- Ա. Էս. Ռոմա	56 (43 - 17)
2.- Ինթէր Միլան	56 (48 - 24)
3.- Եովեթթուս	55 (50 - 21)
4.- Պոլոնիա	45 (31 - 27)
5.- Երեւո Վերոնա	42 (45 - 38)
16.- Լեչէ	24 (27 - 41)
17.- Ֆիորենտինա	22 (28 - 50)
18.- Վենեցիա	16 (25 - 50)

## ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ

### ԱՅՍՕՐ՝ ԼԻՎԵՐՓՈՒԼ - Ա. ԷՍ. ՌՈՍԱ

«Ձեմփիլըզ Լիկ»ի Բ. ճանգրուանի մրցումները արդէն իսկ հասած են իրենց աւարտին, որովհետեւ այսօր եւ վաղը տեղի ունենալիք ութ մրցումներէն ետք վերջնականապէս կը յստականան քառորդ աւարտականին իրենց տոմարը ապահովող ութ խումբերը: Ցարդ իրենց տոմսերը ապահոված են Մանչեսթըր Յունայթըտ, Պալէրմօ Միլանի (Ա. Խմբակ), Ռէալ Մատրիտ (Գ. Խմբակ) եւ Տեֆտերթիօ Քորուսա (Դ. Խմբակ):

Հետեւաբար մնացեալ չորս տոմսերուն համար, այսօր եւ վաղը տեղի պիտի ունենան ճակատագրական մրցումներ, մասնաւորաբար Բ. Խմբակին մէջ, ուր կը տրիէ անորոշ վիճակ մը:

Լիվըրպոլի թէեւ կը գրաւէ խմբակին վերջին դիրքը, սակայն թուրքական հաշիւներով տակաւին մրցաշարքէն

դուրս մնացած չէ, որովհետեւ իր մրցումը կը կատարէ իր դաշտին վրայ, հիւրընկալելով պարագլուխի դիրքը գրաւող Ա. Էս. Ռոման: Նոյն խմբակէն երկրորդ ճակատումը տեղի պիտի ունենայ Կալսթասարայի եւ Պարսելոնայի միջեւ:

Լիվըրպոլէն կախապաշարած է Տիբթմար Համան, իսկ իտալական կազմէն՝ Քաֆու: Իսկ թուրքիոյ մէջ տեղի ունենալիք մրցումին, Պարսելոնա դաշտ պիտի ներկայանայ առանց Ֆիլիփ Քոքիլի (կախակաշարած): Շատ հաւանաբար սպանական կազմէն բացակայի նաեւ Ռիվայօ (Վիլաուր):

Նշենք, թէ Ա. Էս. Ռոմա այժմ ունի 7 կէտ, Պարսելոնա՝ 6 կէտ, Կալսթասարայ՝ 5 կէտ, իսկ Լիվըրպոլ՝ 4 կէտ:

Ստորեւ՝ այսօրուան եւ վաղուան մրցումներուն յայտագիրը:

#### ԱՅՍՕՐ

##### Ա. ՄՄՐԱԿ

Պալէրմօ Միլանի (Գերմանիա) - Նանթ (Ֆրանսա)

Պալսիսթա (Փորթուգալ) - Մանչ. Եունայթըտ (Անգլիա)

##### Բ. ՄՄՐԱԿ

Կալսթասարայ (Թուրքիա) - Պարսելոնա (Սպանիա)

Լիվըրպոլ (Անգլիա) - Ա. Էս. Ռոմա (Իտալիա)

#### ՎԱՂԸ

##### Գ. ՄՄՐԱԿ

Փանաթինայքոս (Յունաստան) - Ռէալ Մատրիտ (Սպանիա)

Սփարթա Փրակա (Չեխիա) - Փորթօ (Փորթուգալ)

##### Դ. ՄՄՐԱԿ

Տեֆտերթիօ Քորուսա (Սպանիա) - Պալէրմօ Լեւերպոլ (Գերմանիա)

Եովեթթուս (Իտալիա) - Արսենալ (Անգլիա)

#### ՊՈՒՆՏԵՍԼԻԿ

### ԼԵԻԵՐՔՈՒՉԸՆ - ՏՈՐԹՄՈՒՆՏ ՊԱՅՔԱՐ՝ ՏԻՏՂՈՍԻՆ ՀԱՄԱՐ

Գերմանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Պունտեսլիկա) 27րդ ճանգրուանի մրցումներուն, Պալէրմօ Լեւերպոլը ամբողջութեամբ պարագլուխի իր դիրքը, 2-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Ետրաքի դաշտին: Հիւր կազմը իր երկու կոլերը նշանակեց Ա. Կիսախաղիին, շնորհիւ՝ Թոմաս Պրոտարիչի (40րդ) եւ Տիմօ Միլանի (45րդ): Շթուլթկարթի մարզիչ Մարսելօ Պրոտտին 79րդ վայրկեանին կարմիր քարտ մը ստացաւ:

Մեծագոյն յաղթանակ արձանագրող խումբը եղաւ 2րդ դիրքը գրաւող Պորուսիա Տորթմունտ, որ 5-1 արդիւնքով յաղթական վերադարձաւ վտանգաւոր գոտիի վրայ գտնուող Ֆրայպուրկի դաշտին (16րդ): Էփսիլտուն (15րդ), Տէտէ (65րդ), Մարսիօ Ամորոսօ (66րդ)

եւ Եան Քոլըր (69րդ եւ 70րդ) նշանակեցին Տորթմունտի կոլերը: Մրցումին հաշիւը բացաւ Ֆրայպուրկի մարզիչ Լեւան Քոպիլի (9րդ): Քայքայալուծները, որ կը հիւրընկալէր Պալէրմօ

Միլանի, 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց: Հիւրընկալ կազմը մրցումը աւարտեց տասը մարզիչ Քոպիլիի (9րդ): Քայքայալուծները, որ կը հիւրընկալէր Պալէրմօ

Ստորեւ՝ 27րդ ճանգրուանի մրցումներուն արդիւնքները:	
Ֆրայպուրկ - Պորուսիա Տորթմունտ	1-5
1860 Միլանի - Շալքէ	1-2
Քայքայալուծները - Պալէրմօ Միլանի	0-0
Համպուրկ - Վոլֆսպուրկ	1-1
Վերտըր Պրեմըն - Զերա Պերլին	0-3
Պորուսիա Մեոնըն - Նիւրնբերկ	1-0
Քորպուս - Ջանքթ Փաուլի	4-0
Շթուլթկարթ - Պալէրմօ Լեւերպոլ	0-2
Քեյօլն - Հանգա Ռոսթըր	4-2

#### ԴԱՍԱԻՌՈՒՄ

1.- Պալէրմօ Լեւերպոլ	ԿէՏ
2.- Պորուսիա Տորթմունտ	56 (63-31)
3.- Պալէրմօ Միլանի	55 (47-23)
4.- Շալքէ	51 (51-20)
5.- Զերա Պերլին	51 (43-27)
.....	49 (51-29)
16.- Ֆրայպուրկ	24 (28-48)
17.- Ջանքթ Փաուլի	21 (28-51)
18.- Զեյլն	19 (17-50)

## ԱՍԹՈՆ ՎԻԼԱ - ԱՐՍԵՆԱԼ՝ 1 - 2

Անգլիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 30րդ ճանգրուանի մրցումներուն, ցարդ նուազագոյն պարտութիւնը (երեք) կողմը խումբը Արսենալ (2րդ) կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ 2 - 1 արդիւնքով յաղթական վերադարձաւ Ասթոն Վիլայի դաշտին (7րդ): Լոնտոնեան կազմին կոլերը նշանակեցին Էտի (15րդ) եւ Ռոպէր Փրիս (60րդ), իսկ Վիլայի կողմէ՝ Տայնը Տապլին (69րդ):

Հակառակ իր արձանագրած այս յաղթանակին սակայն, Արսենալ մնաց 2րդ դիրքին վրայ, մէկ կէտով ետ մնալով պարագլուխի դիրքը գրաւող Մանչեսթըր Եունայթըտէն, որ 5 - 3 արդիւնքով յաղթական վերադարձաւ Ուէսթ Համի դաշտին (10րդ): Տէյվիտ Պեքհամ (17րդ եւ 89րդ փենսիլթիով), Նիքի Պաթ (22րդ), Փօլ Սքոլդ (55րդ) եւ Օլի Կիւնար Սոլսբերի (64րդ) նշանակեցին Մանչեսթըրի հինգ կոլերը:

3րդ դիրքը գրաւող Լիվըրպոլ, որ այժմ երկու կէտով ետ կը մնայ Մանչեսթըրէն, իր կարգին օտար դաշտի վրայ յաղթանակ մը արձանագրեց 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնելով Միտլդըպորտ (13րդ): Էմիլ Զէսքի (33րդ) եւ Ճոն Առնիթ (84րդ) նշանակեցին Լիվըրպոլի կոլերը, իսկ Կէլըթ Սաութիլ (89րդ):

Ստորեւ՝ 30րդ ճանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Ասթոն Վիլա - Արսենալ	1 - 2
Լիօ - Պլեյքըրըն	3 - 1
Պոլքըն - Տերպի Քաուոնթի	1 - 3
Եվերթըն - Սամթըրթոն	4 - 0
Էվերթըն - Ֆուլհեմ	2 - 1
Միտլդըպորտ - Լիվըրպոլ	1 - 2
Նիքիթսըլ - Իփսուիչ	2 - 2
Սաութհեմթըրթըն - Լալսթըր Սիթի	2 - 2
Ուեսթ Համ - Մանչեսթըր Եունայթըտ	3 - 5

#### ԴԱՍԱԻՌՈՒՄ

1.- Մանչեսթըր Եունայթըտ	ԿէՏ
2.- Արսենալ	64 (78 - 40)
3.- Լիվըրպոլ	63 (60 - 32)
4.- Նիքիթսըլ	62 (52 - 26)
5.- Զելսի	56 (54 - 40)
.....	53 (58 - 30)
18.- Պոլքըն	30 (32 - 47)
19.- Տերպի Քաուոնթի	29 (26 - 47)
20.- Լալսթըր Սիթի	19 (21 - 53)

#### ԹԵՆԻՍ

### ՅՈՒԻԹ ԵՒ ՅԱՆՈՒՇՈՎԱ՝ ՅԱՂԹԱԿԱՆ

Անցեալ շաբաթավերջին Քալիֆօրնիոյ մէջ վերջ գտան «Ինտերն Ուէլս» թենիսի տղոց եւ աղջկանց մրցաշարքերը, Լէյթըն Զոլիթի (Աւստրալիա) եւ Տանիէլա Հանթընը (Սլովակիա) յաղթանակներով:

Տղոց մրցումներուն թիւ 1 դասուած Հոլիթ յաղողեցաւ 6-1 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնելով բրիտանացի Թիմ Հենմանը (դասուած 9րդ):

21 տարեկան աւստրալիացին, որ 81 վայրկեանի ընթացքին պարտութեան մատնեց իր մրցակիցը, այս տարուան իր երկրորդ տիտղոսին տիրացաւ: Այս ամսուան սկիզբը, ան պարտութեան մատնած էր Անտոն Ակասին, «Սան խոսէ» մրցաշարքին աւարտականին:

Իսկ աղջկանց աւարտական մրցումին, 18րդ դասուած Տանիէլա մեծ պահանջով մը ստեղծեց, երբ 6-3 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնեց 2րդ դասուած գոլիցերիացի Մարթինա Հինկիսը: Այսպիսով, 18 տարեկան Տանիէլա, որ 75 վայրկեանի ընթացքին պարտութեան մատնեց Հինկիսը, յաղողեցաւ տիրանալ իր առաջին անհատական տիտղոսին:



Լէյթըն Զոլիթ



Տանիէլա Հանթընը

## ՄՊԱՆԻՅՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ ԳՐԱԻՅՑ ՊԱՐԱԳԼՈՒՄԻ ԴԻՐՔԸ

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 30րդ ճանգրուանի գագաթի եւ սպասուած ճակատումը՝ Պարսելոնայի եւ Ռէալ Մատրիտի միջեւ, որ տեղի ունեցաւ «Նուրամփ»ի մէջ, Շաբաթ օր, 98 հազար համակիրներու ներկայութեան, վերջ գտաւ 1 - 1 արդիւնքով:

Կակակալուէր, որ Զինտին Զիտանի նշանակած կոլէն ետք (39րդ) Ռէալ Մատրիտ պիտի արձանագրէ իր առաջին յաղթանակը՝ 19 տարուան սպասումէ մը ետք (անշուշտ «Նուրամփ»ի մէջ), սակայն Զաւի արգելք հանդիսացաւ ատոր, երբ 59րդ վայրկեանին 30 մեթրէն հարուճեց մը պարտութեան մատնեց Ռէալի բերդապահ Սեզարը: Հակառակ իր արձանագրած այս հաւասարութեան, սակայն, Ռէալ Մատրիտ գրաւեց ընդհանուր դասուումն պարագլուխի դիրքը, իր ունեցած կողմը չէր շնորհիւ գերազանցելով Վալենսիան, որ 2 - 1 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք վերջին դիրքը գրաւող Ռայօ Վալքանոյի դաշտին, նահանջեց 2րդ դիրքը: Այս վերջինը իր արձանագրած յաղթանակէն ետք, բարձրացաւ նախավերջին դիրքը:

Նշենք, թէ Պարսելոնա - Ռէալ Մատրիտ մրցումը շուրջ վեց վայրկեան ընդհատուեցաւ, երբ մրցումին առաջին վայրկեանին, երկու պասքեր դաշտ խուժեցին եւ իրենց ձեռքերը բերդին երկու սիւներուն կապեցին՝ ձեռնկապեցով:

Տիեկօ Թրիսթանի կողմէ իրագործուած ճեքիքը (7րդ, 18րդ եւ 32րդ փենսիլթիով) բաւարար

ՓՈՒԹԻՆ - ՔՈՒՉՄԱՀԱՆԳԻՊՈՒՄ



Վլադիմիր Փուտին և Լեոնիդ Զուլցմա

Ռուսիա եւ Ուկրաինա կիրակի օր որոշած են տնտեսական կապերը մարապնդել եւ առեւտրերին թափ տալ յետխորհրդային ելեմտական նոր ուժ մը ստեղծելու համար...

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փուտին յայտնած է, թէ երկու պետութիւնները պէտք է միասնաբար դործեն իրենց տնտեսական եւ քաղաքական ազդեցութիւնը դարձեալ ձեռք ձգելու համար:

Ան ըսած է, որ ուժանիւթի, պաշտպանութեան եւ արհեստագիտութեան մարզերուն մէջ առեւտրերին թափ պիտի տրուի:

«Տնտեսական գործակցութիւնը օգտակար է, որովհետեւ Եւրոպայի համար իրրեւ գործակիցներ աւելի ուժեղ պիտի դառնան», ըսած է Փուտին թղթակիցներու, Օտեսայի մէջ, նախագահ Լէոնիդ Քուլչմայի հետ տեսակցութեան մը ետք:

Ան դիտել տուած է, որ երկու երկիրները պիտի կարենան ուժեղ կերպով ազդել Եւրոպայի տնտեսութեան զարգացման վրայ, «մեզի հետ աւելի լրջօրէն պիտի վարուի աշխարհը եւ մեր սեփական տնտեսութիւնները ունի իր երկրին մէջ, յայտնած է, թէ «Եւրոպայ տկարութիւն չի սիրեր, սակայն ուժ կը սիրէ»:

Ան կը խօսէր Փուտինի եւ Մոլդովիոյ նախագահ Վլադիմիր Վորոնչինի հետ տեսակցութեան մը ետք: Նորհրդարանական ընտրութիւններուն սերտօրէն պիտի հետեւին արեւմուտքի ղէտեր, որոնք կը յուսան, որ երկիրը իր խորհրդային անցեալը իր ետեւ պիտի ձգէ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՌՈՒՄԱՆԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՅ ...

Շարունակուած Ա. Էջէն

Երկու վարչապետները տուին մասնաւոր միացեալ ասուլիս մը, որուն մէջ Հարիւրի հաստատեց երկկողմանի տնտեսական կապերն ու ներդրումները վարձագանձելու կարեւորութիւնը: Ան հաւատեց, որ արարները խաղաղութեան կողմնակից են եւ կը պահանջեն միջապային որոշումներու գործադրութիւնը:

Ռումանիոյ վարչապետը դրուատիքով խօսեցաւ իբրանական կառավարութեան տնտեսական միջոցառումներուն մասին եւ յայտնեց, որ Պուրթէշ քայլեր պիտի առնէ քաջալերելու երկու երկիրներու գործարարներու եւ ներդրումներու գործակցութիւնը:

ՉԷՅՆԻ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԵՋ՝ ԹԱՓ ՏԱԼՈՒ ՐԱՍԱՐ...

Շարունակուած Ա. Էջէն

Միւս կողմէ, Եւրոպական Միութեան պատուիրակը՝ Միկէլ Անիէլ Մորաթինոս, որ երէկ հանդիպում մը ունեցաւ Արաֆատի հետ, ըսաւ, թէ վերջին իրադարձութիւններն ու որոշումները լաւատեսութիւն կը ներշնչեն: Մորաթինոս կ'ակնարկէր յատկապէս իսրայէլեան ուժերու հեռացման խոստումին:

ՄԱԿԻ ընդհանուր քարտուղար Քոֆի Անան նաեւ մը ուղարկած է Շարոնի՝ դատարարութեան համար անոր յայտարարած պատերազմը պաղեստինցիներուն դէմ: ՄԱԿԻ աղբիւրներուն համաձայն նամակ ուղարկուած է Մարտ 12ին: Անան քննադատած է յատկապէս՝ անմիջապէս անգէն մարդոց դէմ յարձակումները: Անան ըսած է որ Իսրայէլ իրաւունք ունի ինքզինք պաշտպանելու, սակայն չի կրնար անտեսել ու խախտել միջազգային օրէնքները:

● ԻՍՐԱՅԷԼԻ խորհրդարանի նախագահ Աւրահամ Պըրլի յառաջիկայ ամսուան ընթացքին, Երիւսաղիմի մէջ հանդիպում պիտի ունենայ պաղեստինցի պաշտօնակիցին՝ Ահմադ Քոնթիի հետ, յայտնեց Ֆրանսուա Գիսկարի պաշտօնատար մը: Ան ըսաւ, որ հանդիպումը տեղի պիտի ունենայ Ապրիլ 12ին:

● ՄէՆՈՒՏԱԿԱՆ Արարիոյ դահճառանց իշխան Ապտալա կողմէ ուղղեց իսրայէլացիներուն մերժելու Շարոնի քաղաքականութիւնն ու որդեգրած միջոցառումները:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԵՋ ՊԱՏԵՐԱԶՍԸ ՏԱԿԱԻՆ ՎԵՐՋ ՉԷ ՂԵՄԸ

Ամերիկացի զօրավար Թոմի Ֆրէնքս, որ Աֆղանիստանի մէջ արեւմուտեան համախմբումի ուժերը կը ղրկաւորէ, յայտնած է, որ թէեւ Աֆղանիստանի պատերազմին մեծագոյն ճակատամարտը՝ «Անարնուտ գործողութիւնը» աւարտած է, սակայն, պատերազմը տակաւին վերջ չէ գտած: Ան ըսած է, թէ «Անարնուտ գործողութիւնը» մեծ յաղողութեամբ վերջ գտած է, սակայն ան զգուշացուցած է, որ ըմբոստները հաւանաբար պիտի վերախմբուին՝ սակայն չի կրնար անտեսել շարունակելու համար:

«Ապագայ գործողութիւնները հաւանաբար Անարնուտայի տարողութեամբ պիտի ըլլան», ըսած է ան, աւելցնելով, որ «գաղափար մը» ունի, որ «գաղափար մը» ունի, թէ յաջորդ յարձակումները ուժը տեղի պիտի ունենան, սակայն ան այդ մասին ոչինչ յայտնած է: Մինչ այդ, Ուաշինկթընի մէջ պաշտպանութեան մարզի պաշտօնատարները յայտնած են, թէ ամերիկեան մասնաշաղկուտ ուժեր կիրակի օր 16 հոգի սպաննած են արեւելեան Աֆղանիստանի մէջ կարգապահութեան մարզում: «Քայլիտա» խոյս տուող անդամ զինեալները կը փոխադրէր: Պաշտպանութեան մարզի այլ պաշտօնատարներ ըսած են, թէ

ամերիկեան ռանակիր մասնաշաղկուտ ուժեր 3 կամ 4 փոխադրակառքերէ բաղկացած կարաւանի մը վրայ յարձակած են եւ կ'ենթադրուի, թէ անոնք կարտէզի շուրջ տեղի ունեցող «Անարնուտ գործողութեան» մասնակցող ամերիկեան զինուորականները ուժերէն խոյս կու տային:

ԸՍՏ ԻՎԱՆՈՎԻ՝ ԱՍԵՐԻՎԱՅԻՔ ԵՐԱՐ ԱՏԵՆ ԱՖՂԱՆԻՍՏԱՆ ՊԻՏԻ ՄԵՆԱ

Միւս կողմէ, Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով կիրակի օր յայտնած է, թէ Մ. Նահանգները լաւ աշխատանք տարած են Աֆղանիստանի մէջ թալիբաններու եւ «Քայլիտա» ցանցին դէմ, սակայն ամերիկացիք պէտք է պատրաստուին երկար տարիներ մնալու այդ երկրին մէջ՝ մնացեալ զինեալներէն ձեռքազատելու համար:

Ուաշինկթընի մէջ հարցազրոյցի մը ընթացքին, պաշտպանութեան նախարարը, որ անցեալ շաբաթ ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ տեսակցութիւններ ունեցած էր, յայտնած է, թէ ամերիկացի ժողովուրդը պէտք է շատ լաւատես ըլլայ՝ Աֆղանիստանը զինեալներէ արագօրէն ձեռքազատելու գծով:

Նախկին Նորհրդային Միութեան 1989ին վերջ տուած էր Աֆղանիստանի 10 տարուան պաշտպան իր գրաւումին, որուն ընթացքին շուրջ 15 հազար խորհրդային զինուորականներ զոհուցանուած էր:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԵԳԻՊՏՈՍ

ԲԱՆՏԱՊԱՀԸ ՏԱՍԸ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԻ

ԳԱՀԻՐԷ, 18 (ՌՈՅԹԸՐԸ)։— Եգիպտական ատեան մը բանտապահ մը դատապարտեց տասը տարուան բանտարկութեան, բանտարկեալ մը ցմահ ձեռք բռնելու փորձը: Դատարարը կը հաղորդէ, որ բանտապահը կապած է բանտարկեալին ոտքերը եւ սկսած՝ զաւազանի հարուածներ տալ անոր, ինչ որ բանտին կարգ ու կանոնին դէմ է: Սակայն բանտապահին նպատակը չէ եղած սպաննել բանտարկեալը:

Անոր մահէն ետք ոճրագործ պահակը կ'ըզծ պատճառաբանութիւն մը հնարած է, ըսելով, թէ ան հինգ այլ բանտարկեալներու հետ կուռելէ ետք՝ մահացած է:

Եգիպտոսի խորհրդարանը քուէարկութիւն կայացուցած է արգիլելու համար բանտերուն մէջ բանտարկեալները ձեռք բռնելու պատիժը: Մարդկային իրաւանց պաշտպան խմբակները քննադատած են Եգիպտոսի բանտերուն իրապիճակը յայտնելով, որ բանտարկեալներու հետ վերաբերմունքը անգթութեան խորհրդանշան է, իսկ տանջանքները անարդար օրինակներ են ինքնակառավարմանը կը կիրարկուի ոստիկանատուներու եւ բանտերու մէջ:

ՄԱԿ ՄԷՅՐԻ ՌՈՊԻՆՍԸՆ Զ՝ՈՒՉԵՐ ՄՆԱԿ ՊԱՇՏՈՆԻ ՎՐԱՅ

ԺԼՆԵԻ, 18 (ՌՈՅԹԸՐԸ)։— ՄԱԿի մարդկային իրաւանց գործակալութեան յանձնակատար Մէյրի Ռոպինսըն երկուշաբթի օր յայտնեց, որ նոր նստաշրջանի մը շուրջը ունենալ, երբ իր նշանակման ժամանակաշրջանը կ'աւարտի յառաջիկայ Սեպտեմբերին: Իրանայի նախկին նախագահ Ռոպինսընը հրաժարուի խօսք արտասանեց ՄԱԿի մարդկային իրաւանց գործակալութեան տարեկան նիստին: Ռոպինսընի քառամեայ առաջին նստաշրջանը աւարտած էր Սեպտեմբեր 2000ին: Օրին մէջ տարիով երկարաձգուեցաւ անոր նստաշրջանը: Ռոպինսըն իր խօսքին մէջ ըսաւ, որ վերջին անգամ ըլլալով կը խօսի գործակալութեան տարեկան ժողովին:

Ռոպինսըն, որուն կծու ու սուր քննադատութիւնները գծողութիւն պատճառած են «մեծ ուժերու», իր խօսքին մէջ ընդունեց, որ իր տեսակէտները մարդկային իրաւունքներու մասին, անհանգստացուցած են մեծամիւս երկիրները ու կառավարութիւնները:

Մարդկային իրաւանց «Հիւմըն Ռայթ Ուոչ» շարժումը պատասխանատու մը ըսաւ, որ Ռոպինսընը կը վճարէ զինը Ուաշինկթընի, Մոսկուայի եւ Պէյճիկի հանդէպ որդեգրած անպիմոյ կեցուածքին: Ան աւելցուց, որ Ռոպինսըն խիզախօրէն յայտարարեց, որ այդ երկիրներու մէջ մարդկային իրաւունքները կը բռնաբարուին: Ռոպինսըն պէտք է օրինակ դառնայ զայիք յանձնակատարներու իր հաստատած արժեքափոխումը:

ԻՏԱԼԻԱ ԱՊՕՐԻՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ՓՈԽԱԴՐՈՂ ՆԱԻ ՄԸ ԿԸ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԻ

ՔԱԹԱՆԻԱ, 18 (ՌՈՅԹԸՐԸ)։— Դէպի Իտալիա ուղղուող նաւ մը կը փոխադրէր շուրջ հազար ապօրինի զաղթականներ, որոնք մօտեցող ոստիկաններուն սպաննացած են իրենց երեխաները ծով նետել՝ եթէ անոնք արգելք հանդիսանան իրենց ճամբորդութեան: Իտալական ծովուծի պաշտօնատարները յայտնեցին, որ ոստիկանութիւնը ուղղաթիւր մը պահանջած է, որպէսզի յղի կին մը փոխադրէ հիւանդանոց, սակայն ան արդէն իսկ ծննդաբերած է նաւուն մէջ: Գաղթականները փոխադրող նաւը կանգ առած է արեւելեան Սիկիլիոյ Քաթանիա նաւահանգիստին մէջ: Գաղթականները շուրջ շաբաթ մը մնացած են նաւուն մէջ, մինչեւ Իտալիա հասնիլը:

Իտալական ծովուծի յայտնեց, որ նաւը ճամբորդութեան սկսած է Լիբանանէն, սակայն Լիբանանի փոխադրութեան հարցերու նախարարութեան մէջ կ'պաշտօնատարը հերքեց այդ լուրը:

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ «ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ» ԿԸ ՆԿԱՏԷ ...

Շարունակուած Ա. Էջէն

միջեւ համաձայնութիւն կայ հարցը քննելու ուսումնասիրական յատուկ յանձնախումբի մը միջոցաւ եւ նկատի առնելով այս հանգամանքը, աւելի լաւ կ'ըլլայ, որ պաշտօնական թիֆլիսը սպասէ այդ յանձնախումբի աշխատանքներու արդիւնքներուն եւ յետոյ քննարկէ հարցը»: Միւս կողմէ, Պուրճանատէն «Ողբերգութիւն» համարած է Հայկական Յեղասպանութիւնը:

Իր կարգին, Վրաստանի խորհրդարանի «Աւանդակալ» խմբակցութեան անգամ Թեո Պատաշվիլի «Փրայմ Նիուզ» գործակալութեան տրուած հարցազրոյցի մը ընթացքին յայտնած է, թէ Վրաստանի խորհրդարանին կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչումը կը բարդացնէ վրաց - թիբեական եւ վրաց - արաբական յարաբերութիւնները: «Պէտք է հետաքննել միայն այդ հարցի քննարկումները», ըսած է Պատաշվիլի:

ՅՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐ ԺՈՍՓԷՆԻ ԵՒ ՇԻՐԱՔԻ ՓԼԱՌՅՈՐՄԵՐԸ ՆՈՅՆԱՆՄԱՆ ԵՆ ԻՐԱՐՈՒ



Լիոնել Ժոսփէն

ՓԱՐԻԶ, 18 (ՌՈՅԹԸՐԸ)։— Ֆրանսայի ընկերվարական վարչապետ Լիոնել Ժոսփէն Երկուշաբթի օր խոստացած է շահատուրքեր կրճատել եւ ոճիրները ճշմել՝ նախագահ ընտրուելու պարագային: Ժոսփէնի վարժարանի մաս կը կազմեն վերջ տալ անտունութեան՝ ընակեցման նոր ծրագիրով մը, 5 տարուան ընթացքին անգործներու թիւը 900 հազարով նուազեցնել եւ Ֆրանսայի թոշակներու դրուութիւնը բարեկարգել:

Նախագահական ընտրութեանց առաջին հանգրդուանը Ապրիլ 21ին պիտի կայացուի, իսկ Մայիս 5ի երկրորդ հանգրուանին կը նախատեսուի, որ զլիսաւոր երկու մրցակիցները՝ Ժոսփէն եւ ներկայ նախագահ Ժաք Շիրաք դէմ յանդիման գտնուին: Ժոսփէն յայտնած է, թէ ընտրական իր ծրագիրը մշակուած է այնպիսի ձեւով, որ անիկա պէտք է աշակողման եւ ձախակողմեան հակուածներով քուէարկողներուն գրաւելի նկատուի:

«Լը Մոնտ» օրաթերթը խմբագրականի մը մէջ նշած է, թէ զլիսաւոր երկու մրցակիցներուն վարժարանները շատ նմանօրինակ են: «Գաղափարներու ճակատամարտ մը անիմաստ է», գանգատած է անիկա:

ՌԻԱԾԻՆԿԹԸՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՓՈԽ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ԳՈՐԾՈՒՂԷ ԻՍԼԱՄԱՊԱՏ

ԻՍԼԱՄԱՊԱՏ, 18 (ՌՈՅԹԸՐԸ)։— Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի օգնական Քրիսթինա Ռոքքա Հնդկաստանէն մեկնեցաւ Փաքիստան՝ շարաթաղեմին իսլամապատի եկեղեցիներէն մէկուն պայթուցիկ զոհ գացած երկու ամերիկացիներու դիակներուն տուն փոխադրութիւնը դասաւորելու համար:

Փաքիստանի արտաքին գործոց նախարարութեան մէջ բանբերը յայտնեց, որ փաքիստանցի պաշտօնատարներու եւ Ռոքքայի միջեւ հանդիպում մը տակաւին չէ ճշդուած, որովհետեւ Ռոքքայի իսլամապատացեալութիւնը եղած է անակնկալ: Պայթուցիկ զոհ գացած ամերիկացիները Փաքիստանի ամերիկեան դեսպանատան պաշտօնեայի մը կիներն ու զաւակն են:

Ռոքքա այցելեց նաեւ իսլամապատի հիւանդանոցներուն մէջ եկեղեցւոյ պայթուցիկ վիրաւորներուն եւ յայտնեց, որ նման արարքներ փաստեր են ահաբեկչութեան դէմ միջազգային պատերազմ մը մղելու անհրաժեշտութեան:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԵՊԻՆՂ ՊԸՐԻ...

Շարունակուած Ա. Էջէն

ընդառաջած է Պէյրութի արաբական վեհաժողովին հրաւերին: Նշենք, որ այս ժողովը սկսաւ կիրակի երեկոյեան Մարքի մէջ: Նորհրդաժողովին կը մասնակցին 133 երկիրներէ մօտաւորապէս երկու հազար պատուիրակներ:

Կը նախատեսուի, թէ խորհրդաժողովին աշխատանքներուն տիրապետէ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացն ու յատկապէս՝ արեւմահեղութիւնն ու բռնաբարքները: Իսրայէլ տասնեակ վարչապետներու կողմէն Մարքի: Անոնց կարգին են խորհրդարանի նախագահ Աւրահամ Պըրլի եւ արդարութեան նախարար Մէյր Շիրքիթ:

Բացման խօսքին մէջ, Մարքի Մոհամէտ Զ. Թաւադըրը ողջունեց Պըրլի, աւելցնելով սակայն, որ Իսրայէլ կը շարունակէ օրական անմեղներ սպաննելու քաղաքականութիւնը: Մոհամէտ Զ. աւելցուց, որ Մարքը իր մտահոգութիւնը կ'արտայայտէ Իսրայէլի կառավարութեան որդեգրած քաղաքականութեան եւ ուժի գործածութեան հանդէպ: Մարքի թագաւորը ըսաւ նաեւ, որ պաղեստինեան պետութեան մը հաստատումը պիտի ըլլայ խորհրդանշան Միջին Արեւելքի ժողովուրդներուն եւ կրօններուն գոյակցութեան եւ երապրութեան:

Մարքի պաշտօնատար մը ըսաւ, որ Պըրլի եւ Շիրքիթ հանդիպում պիտի ունենան պաղեստինեան խորհրդարանի փոխ նախագահ Իպրահիմ Ապու Նաժալի հետ: